

ՔՂ 1905



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 19 » « 02 » 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 019 - 24

Ձեռնարկողը՝

«Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ
Արշակունյաց 75 Ա, բն. 8

Գործունեությունը՝

Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկտրություն
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 019 - 24

«19» փետրվարի 2024թ.

Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզի, Ակունք համայնք, Նոր Գյուղ բնակավայր

Ներածական մաս. Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի վարչական տարածքում՝ Գուֆանասար լեռան հարավ-արևմտյան մասի սարահարթում: Մոտակա բնակավայրերն են՝ Նուռնուսը 4,3կմ, Ջրաբերը 2կմ, Կապուտանը 3,4կմ Բյուրեղավանը 4,7կմ, իսկ Աբովյան քաղաքից գտնվում է շուրջ 6կմ հեռավորության վրա:

Գործունեության համար հայցվող տարածքի հողերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի համար նախատեսված, 07-049-0283-0001, 07-049-0283-0017 կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի կողմից 1965թ. մարտի 31-ի N139 արձանագրությամբ:

- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են - 528.5հազ. մ³, տարեկան 26425մ³,

- արդյունահանվող պաշարների քանակը կկազմի 465.4հազ.մ³, տարեկան 23270մ³ ծավալով լիթաիդային պեմզա,

- մակաբացման ապարների ծավալը 740մ³ է,

- ծառայման ժամկետն է 20 տարի:

Բացահանքում աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարի: Աշխատանքային օրերի քանակն ընդունվում է 260 օր տարում: Աշխատանքային հերթափոխերի քանակը 1 օրվա համար ընդունվում է 1 հերթափոխի տևողությունը - 8.0 ժամ:

Հայցվող տարածքի կոորդինատներն ըստ Arm WGS-84 համակարգի հետևյալն են.

X	Y
4466322.6833	8470267.0905
4466513.4120	8470265.0525
4466534.1815	8470411.7660
4466457.8553	8470416.5847
4466377.8371	8470459.7928
4466323.8666	8470309.5017

Ելնելով հանքավայրի տեղադիրքից հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, հայցվող տարածքի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը - 205մ,

- ամենամեծ լայնությունը - 195մ,

- օգտակար հանածոյի միջին հզորությունը - 17.6մ,

- օտարման մակերեսը - 3.0հա:

Մակաբացման ապարները նախագծված բացահանքի եզրագծի մեջ առկա են միայն բացահանքի հարավ արևմտյան մասում 800մ² մակերեսով, որի քանակն է 740մ³ (փխրուն-բեկորային ալյուվիալ-դեյուվիալ առաջացումներ՝ կավավազներ), որոնք կարող են հեռացվել բուլդոզերի օգնությամբ առանց նախապես փխրեցման:

Մակաբացման ապարները կհեռացվեն 10-րդ տարվա ընթացքում, սկսած բացահանքի 1670.0մ բարձրության հորիզոնը մշակելիս: Շահագործման ընթացքում փխրուն բեկորային դեյուվիալ առաջացումները բուլդոզերով տեղափոխվում են բացահանքի հարավ արևմտյան մասում ձևավորվող լցակույտ /N1 լցակույտ/: Լցակույտի զբաղեցրած մակերեսն է 220մ²:

Օգտակար հանածոյի արդյունահանումը և բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել 2.5մ³ շերտի տարողությամբ Յ-2503 մակնիշի էքսկավատորի միջոցով:

Բուլդոզերային աշխատանքները կայանում են բացահանքում ապարների տեղափոխման ու կուտակման, մակաբացման ապարների հավաքման և տեղափոխման (5



փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրում:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական գործընթացի լիարժեքությունն ապահովելու նպատակով՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրում կայացած 4-րդ հանրային քննարկմանը ներգրավվել է նաև Ջրաբեր բնակավայրը՝ որպես ազդակիր համայնք:

Հանրային քննարկման ընթացքում Ջրաբեր բնակավայրի ներկայացուցիչները դեմ են արտահայտվել «Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների իրականացմանը՝ պատճառաբանելով արդյունահանման աշխատանքների հնարավոր վնասակար ազդեցությունները համայնքի բնակչության վրա:

Մինչև փորձաքննական գործընթացի ավարտը հաշվետվությունում չի ներկայացվել տեղեկատվություն հարակից հանքավայրերի արտանետումներով պայմանավորված աղտոտվածության վերաբերյալ:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Քար և Ավազ-Ջրաբեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ *հ. Արզումանյան* Հովիկ Մեսրոպյան

